

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 07.03.2022թ. նիստի**

Գիտական խորհրդի նիստը կայացավ հեռահար կապի միջոցով: Հաղորդագրություններ են ուղարկվել գիտական խորհրդի 39 (երեսունինը) անդամներին:

Դիտարկումներ, համաձայնություններ և հաշվետվությունների գնահատումներ են ուղարկել գիտական խորհրդի 38 (երեսունութ) անդամներ (կցված են արձանագրությանը):

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
1.	Մերոբյան Երվանդ	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2.	Ավետիսյան Նազելի	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր -տնօրենի ՊԿ
3.	Նիկողոսյան Գագիկ	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4.	Մելքոնյան Հովիկ	Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5.	Սարգսյան Արմենուհի	Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6.	Խաչատրյան Թերեզա	Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
7.	Պետրոսյան Կարինե	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
8.	Մելիքյան Թամարա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան
9.	Հովհաննիսան Օֆելյա	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ղեկան
10.	Մարդոյան Ռուզաննա	Մանկավարժության ֆակուլտետի ղեկան
11.	Մկրտչյան Արթուր	Ռազմական ամբիոնի պետ
12.	Դավինյան Աշոտ	ՇՊՀ քոլեջի տնօրեն

13.	Դարբինյան Կարեն	ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն
14.	Խաչատրյան Վալերի	ՇՊՀ արհմիության նախագահ
15.	Մկոյան Արտաշես	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենատարեց դոկտոր)
16.	Խորիկյան Հովհաննես	Պատմ. գիտ. դոկտոր, (անենաերիտասարդ դոկտոր)
17.	Մարգարյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
18.	Մարտիրոսյան Լևոն	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
19.	Մկրտչյան Արթուր	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
20.	Ղուկասյան Լուսիկ	Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
21.	Աղանյան Գևորգ	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
22.	Գասպարյան Արշավիր	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
23.	Հովհաննիսյան Արտակ	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
24.	Սահակյան Կարինե	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
25.	Հովհաննիսյան Անահիտ	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
26.	Հայրապետյան Սերգո	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր
27.	Կուրազյան Օֆելյա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
28.	Տեր-Աղամյան Շուշան	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
29.	Մաթևոսյան Էվելինա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
30.	Համբարյան Ժենյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

31.	Հովհաննիսյան Յուլյանա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի	մաթեմատիկա
32.	Գալստյան Ամալյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի	մաթեմատիկա
33.	Խաչատրյան Կարեն	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող	
34.	Մխիթարյան Լիլիթ	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական գործ մասնագիտության (անգլերեն-հայերեն) 2-րդ կուրսի ուսանողուհի	
35.	Հովհաննիսյան Անժելա	Մանկավարժության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի (հեռակա) ուսանողուհի	
36.	Թադևոսյան Մարգարիտ	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի	
37.	Գրիգորյան Արուսյակ	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի քարտեզագրություն և կատաստրային գործ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի	
38.	Մինասյան Ելենա	Ռեզմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 2-րդ կուրսի ուսանողուհի	

ՕՐԱԿԱՐԳ

1.1 «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի քոլեջի 2020-2021 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Հաղ.՝ քոլեջի տնօրեն Ա. Դավինյան

1.2. «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ավագ դպրոցի 2020-2021 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Հաղ.՝ ավագ դպրոցի տնօրեն՝ Կ. Դարբինյան

1.3. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

1.4. Մանկավարժության ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ Ռ. Մարդոյան

1.5. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օֆ. Հովհաննիսյան

1.6. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ՝ Լ. Մարտիրոսյան

1.7. Ռազմական ամբիոնի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Ռազմական ամբիոնի պետ, գնդապետ՝ Ա. Մկրտչյան

2. Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի գիտական խորհրդի նիստում հաստատված Հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության կանոնակարգում փոփոխությունների մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Մերոբյան

1. ԼՍԵՑԻՆ՝

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի քոլեջի 2020-2021 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի քոլեջի 2020-2021 ուստարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.2 . ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ավագ դպրոցի 2020-2021 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ավագ դպրոցի 2020-2021 ուստարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 37, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

1.3 ԼՍԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.4 . ԼՍԵՑԻՆ՝

Սանկավարժության ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Մանկավարժության ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.5 ԼՍԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 37, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

1.6 ԼՍԵՑԻՆ՝

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 37, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

1.7 ԼՍԵՑԻՆ՝

Ռազմական ամբիոնի 2020-2021 ուստարվա հաշվետվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ռազմական ամբիոնի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 37, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի գիտական խորհրդի նիստում հաստատված Հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության կանոնակարգում փոփոխությունների մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի գիտական խորհրդի նիստում հաստատված Հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության կանոնակարգում առաջարկվող փոփոխությունները / առաջարկվող փոփոխությունները կցված են/.

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

38 անդամ. կողմ՝ 37, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

Առաջարկվում է «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2021 թվականի հոկտեմբերի 26-ի գիտական խորհրդի նիստում հաստատված Հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության կանոնակարգում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները, մասնավորապես.

1. 2.1. կետը՝ «Դեկանի ընտրությունը նշանակվում է ՇՊՀ ռեկտորի հրամանով, և այդ մասին հայտարարությունն ընտրություններից առնվազն հիսուն օրացուցային օր առաջ հրապարակվում է ՇՊՀ կայքէջում և առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում», վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Դեկանի ընտրությունը նշանակվում է ՇՊՀ ռեկտորի հրամանով, և այդ մասին հայտարարությունն ընտրություններից առնվազն հիսուն օրացուցային օր առաջ՝ հրամանին հաջորդող օրվանից 1 շաբաթվա ընթացքում, հրապարակվում է ՇՊՀ կայքէջում և «Կրթություն» շաբաթաթերթում, ինչպես նաև առնվազն 2 անգամ հրապարակվում է մարզային հեռուստաընկերություններից մեկով»:

2. 2.3. կետը՝ «Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է հայտարարության հրապարակումից երեսուն օրացուցային օր հետո: Թեկնածուները ՇՊՀ գիտական քարտուղարին առձեռն ներկայացնում են առաջադրման վերաբերյալ հետևյալ փաստաթղթերը՝

ա. ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ նիստի արձանագրության հիման վրա կազմված համապատասխան քաղվածքը և թեկնածուի համաձայնությունը (դիմում-հայտը), իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմում,

բ. կադրերի հաշվառման անձնական թերթիկ (որում պետք է պարտադիր նշել հեռախոսահամար և էլեկտրոնային փոստի հասցե),

գ. վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ(եր),

դ. ինքնակենսագրություն,

ե. բարձրագույն կրթության դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը,

զ. գիտական աստիճան(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը,

է. գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը (առկայության դեպքում),

ը. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների հաստատված ցուցակը,

թ. ՇՊՀ ֆակուլտետի հնգամյա զարգացման ծրագիր (այսուհետ՝ Հայեցակարգ)՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով (կրիչով) փակ և ստորագրված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո՝ ռեկտորի կողմից, համապատասխան դիմումների մակագրման ժամանակ,

ժ. պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ (առկայության դեպքում)», վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Թեկնածուների կողմից փաստաթղթերի հանձնումն սկսվում է ռեկտորի հրամանին հաջորդող օրվանից 20 աշխատանքային օր անց և տևում է 5 աշխատանքային օր: Թեկնածուները ՇՊՀ գիտական քարտուղարին առձեռն ներկայացնում են առաջադրման վերաբերյալ հետևյալ փաստաթղթերը՝

ա. ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ նիստի արձանագրության հիման վրա կազմված համապատասխան

քաղվածքը և թեկնածուի համաձայնությունը (դիմում-հայտը), իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմում,

բ. ինքնակենսագրություն, որը պետք է պարունակի թեկնածուի ուսման, աշխատանքային և գիտակրթական գործունեության նկարագիրը,

գ. վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ(եր),

դ. անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը և մեկ լուսանկար 3x4սմ չափսի,

ե. բարձրագույն կրթության դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը,

զ. գիտական աստիճան(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը,

է. գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը (առկայության դեպքում),

ը. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների հաստատված ցուցակը,

թ. թեկնածուի գործունեության ծրագիրը, այն է՝ «Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ)՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով (կրիչով) փակ և ստորագրված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո՝ ռեկտորի կողմից, համապատասխան դիմումների մակագրման ժամանակ,

ժ. պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ (առկայության դեպքում)»:

3. 3.4 կետը՝ «Նախագահողը հարցի քննարկումը սկսում է թեկնածուների առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմամբ և ներկայացնում է թեկնածուների ցուցակը», վերաշարադրել հետևյալ բովանաղակությամբ.

«Նախագահողը հարցի քննարկումը սկսում է թեկնածուների առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմամբ և ներկայացնում է թեկնածուների ցուցակը: Ֆակուլտետային խորհրդի նիստին դեկանի պաշտոնի հավակնորդի բացակայությունը հիմք չէ նրա ներկայացրած Հայեցակարգը

քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի»:

3. 4.2 կետը՝ «Թեկնածու(ներ)ի՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշման համար գիտական քարտուղարը ըստ թեկնածուների ցուցակի ներկայացնում է նրան(ց) առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն, որից հետո Գիտական խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում», վերաշարադրել հետևյալ բովանաղակությամբ.

«Թեկնածու(ներ)ի՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշման համար գիտական քարտուղարն ըստ թեկնածուների ցուցակի ներկայացնում է նրան(ց) առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն, որից հետո Գիտական խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում: Գիտական խորհրդի նիստին ղեկանի պաշտոնի հավակնորդի բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի»:

4. Առաջարկվում է Հավելված 1-ի 2-րդ կետը՝ «Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի տեղակալման թեկնածու(ներ)ի ՖԽ-ում հայեցակարգերի քննարկման և ԳԽ-ում ընտրությունների անցկացման նիստերին Ձեր ներկայությունը պարտադիր է», հանել Կանոնակարգից:

Գիտական խորհրդի նախագահ՝
Գիտական խորհրդի
քարտուղար



Ե. ՄԵՐՈՒՅԱՆ

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ